ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» 09 2012թ. N: 126 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՈՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006թ. հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» թիվ 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նորիկ Գրիգորյանին 2012 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև սեպտեմբերի 29-ը /ներառյալ/ գործուղել ք.Երևան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի թիվ 740-Ա որոշմամբ հաստատված ծրագրով անցկացվող վերապատրաստման դասընթացներին:
2. Նորիկ Գրիգորյանի վերապատրաստման ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը վերապահել աշխատակազմի ղեկավար Խաչատուր Պողոսյանին:
3. Գործուղման տևողությունը 12 օր:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է